

իրականության մեջ, «*Բանը*», որպես «*Աստուծոյ Որդի*»⁴⁰ հրեական աւանդութեանց չի համապատասխաներ, անոր ծագումը առաւելաբար պէտք է փնտռել հին յունական փիլիսոփայութեան մեջ:

«*Բանը*», որպէս հասկացութիւն, առաջին անգամ կը տեսնենք յոյն փիլիսոփայ **Հերակլիտոս Եփեսոսցիի** (յուն.՝ Hērakleitos ó Ephésios, մօտ. 540/520 – 483/460 մ.թ.ա.) երկերուն մէջ, որմէ անցած է Ստոյիկներուն եւ հասած Փիլոնի ու աւելի ուշ՝ Յովհաննէս Աւետարանիչին:

Փիլոնի համաձայն, յաւիտենական «*Բանը*» ինքն է, որ կը ղեկավարէ բոլոր հրեշտակները եւ կը միջնորդէ մարդոց, այսինքն մարդկային նիւթական աշխարհին եւ բնագանգական (Metaphysics) աննիւթական Աստուծոյ միջեւ: Այլ խօսքով, յաւիտենական «*Բանը*», որպէս միջնորդ, մարդոց խնդրանքներն ու աղօթքները կը հասցնէ Աստուծոյ եւ Աստուծոյ պատուիրանները կը փոխանցէ մարդոց: Փիլոնի «*Բանը*», որպէս «*Երկրորդ Աստուած*» անուանումը, բոլորովին նոր գաղափար մըն էր, որ հետագային, Նոր-Պիլթագորականութեան (Neo-Pythagoreanism) եւ Միջին-Պլատոնականութեան ուղիւսներու մէջ ունեցաւ իր տարբերակը:

Թէ՛ Փիլոնի ապրած ժամանակաշրջանին եւ թէ՛ անկէ յետոյ, վերոյիշեալ փիլիսոփայական ուղղութիւններու մօտ միտում մը յառաջացած էր, որ անդրանցական (Transcendental) ու աննիւթական Աստուածը, որպէս *Գերագոյն Հոլութիւն*, աշխարհէն բոլորովին կամ որքան որ կարելի է աւելի բաժնէին: Այսուհանդերձ, աշխարհի ու Աստուծոյ միջեւ, ասդենականի ու անդենականի միջեւ կապ մը պահելու համար, անոնք շատ նպատակայարմար գտան «*Երկրորդ Աստուծոյ*» մը գոյութիւնը, որ ինչպէս նշեցինք, *Պլատոնի «Տիմաիոս»* (յուն.՝ Tímaios) երկի **Դեմիուրգոս**⁴¹ (յուն.՝ Dēmiourgós) աստուածն էր, որ կը ներկայանար որպէս «*ստեղծագործ արարիչ աստուած*»:

Պլատոնի համաձայն, ինչպէս նշեցինք, *Նիւթը* առաջին հերթին կը ներկայացնէ Նաեւ «*չարը*» եւ այս *Նիւթին* հետ գործ ունեցողը եւ անով ու հանճարեղ գաղափարներու միջոցով ողջ տիեզերքը ստեղծագործողը՝ «*Երկրորդ Աստուածն*» է, որ Նաեւ գլխաւոր պատասխանատուն է աշխարհի ոչ-բարի ու ոչ-լաւ իրավիճակին, մինչ գերագոյն ու միակ «*Առաջին Աստուածը*» կը մնայ իր անեղծ ու ամենասուրբ բարձունքին վրայ եւ աշխարհի մէջ տիրող այս վատ իրավիճակին պատասխանատուն չի նկատուիր:

40 «Աստուծոյ Որդիներ».-

Հնգամատենի (Հին Կտակարանի) մէջ թէեւ գոյութիւն ունի երբեմն եզակի, բայց ընդհանրապէս յոգնակի «Աստուծոյ Որդիներ» բառակապակցութիւնը, բայց այնտեղ նկատի կ'առնուին՝ հրեայ ժողովուրդը, հրեաները, կամ պարզապէս մարդիկ, որ Աստուծոյ կ'առնչուին: Նաեւ Աստուածաշունչի Նոր Կտակարանին մէջ կը գտնենք վերոյիշեալ իմաստները տուող «Աստուծոյ Որդիներ» բառակապակցութիւնը:

41 Դեմիուրգոս (յուն.՝ Dēmiourgós).-

Ստեղծագործ – արարիչ – աստուծոյ մասին, տե՛ս Էջ 33-ի Էջատակի ծանօթագրութիւնը: